

## ԿԱՆՈՆՆԵՐ

### «Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԲԱՆԲԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի (այսուհետև՝ «Բանբեր») հրատարակչական բարեվարքության կանոնները, որոնց պարտավոր են հետևել հոդված(ներ)ի հեղինակ(ներ)ը (այսուհետև՝ Հեղինակ) և գրախոս(ներ)ը:
2. Հրատարակվող հոդվածների գիտական բարեվարքության սկզբունքների հիմքում ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) «Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղեցուցիչները» (<https://www.bok.am/node/11852>) և Հրատարակման էթիկայի հանձնաժողովի (Committee on Publication Ethics (COPE) գիտական հետազոտությունների հրատարակման համար ընդունված միջազգային չափանիշներն (<https://publicationethics.org/guidance>) են:

#### II. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3. «Բանբերին» ներկայացված հոդվածը պետք է պարունակի գիտական նորոյթ և արդիականություն, համապատասխանի **«Բանբերի» հոդվածներին ներկայացվող պահանջներին:**
4. Հեղինակը, ստորագրելով **«Տեղեկացման թերթիկը»**, հավաստում է, որ ծանոթացել է սույն ուղեցույցի կանոններին և «Բանբերի» հոդվածներին ներկայացվող պահանջներին, որ տվյալ հոդվածը նախկինում չի հրատարակվել կամ ներկայացված չէ այլ հանդեսում հրատարակության (էլեկտրոնային և /կամ տպագիր ձևաչափով):
5. Անընդունելի են գրագողությունը, ինքնագրագողությունը, այլ գիտական հետազոտությունների արդյունքների յուրացումը կամ տվյալների կեղծումը և գիտական բարեվարքության խախտման այլ դեպքերը:
6. Հոդվածում պարտադիր է հղում(ներ)ը սկզբնաղբյուրներին: Հեղինակը չի կարող օգտագործել այլ հեղինակ(ներ)ի աշխատանք(ներ)ի տեքստի առանձին հատվածներ (նկար, գծապատկեր, աղյուսակ), բառացի մեջբերումներ, վերծանումներ կամ բառափոխված տարբերակներ՝ առանց համապատասխան հղումների:

7. Սույն ուղեցույցով սահմանված 5-րդ և 6-րդ կետերը խախտելու դեպքում գիտության բաժնին կից խմբագրական-հրատարակչական խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) իրավունք ունի մերժելու կամ հետաձգելու ներկայացված հոդվածի հրատարակումը:
8. Խորհրդի կողմից առաջարկված փոփոխությունները մերժելու, գրախոսության դիտողությունների շուրջ փոխհամաձայնության չգալու դեպքում հեղինակն իրավունք ունի հետ վերցնելու հոդվածը:
9. Հոդվածի բացասական գրախոսության վերաբերյալ Հեղինակ(ներ)ի գրավոր անհամաձայնության դեպքում Հոդվածի հրատարակման հարցը քննարկվում է Խորհրդում:
10. Հոդվածի հրատարակման մերժման մասին Խորհրդի որոշումը բողոքարկման ենթակա չէ:

### **III. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՐ**

1. Խորհուրդը, հոդվածն ընդունելուց հետո, այն ներկայացնում է կույր գրախոսության, որի նպատակն է պարզել և հիմնավորել աշխատանքի ինքնօրինակությունը, գիտական նորոյթը և արդիականությունը, օգտագործած աղբյուրների համապատասխանությունը:
2. Հոդվածը ենթակա է առնվազն մեկ կույր գրախոսության:
3. Խորհուրդը «Բանբերի» մասնագիտական ուղղվածությանը և հրատարակչական բարեվարքության կանոններին, ինչպես նաև «Բանբերի» հոդվածներին ներկայացվող պահանջներին էապես չհամապատասխանող հոդվածը մերժում է, որի մասին հեղինակն իրազեկվում է ողջամիտ ժամկետում:
4. Հոդվածի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների, ընդունման կամ մերժման մասին Խորհուրդը ծանուցում է հեղինակ(ներ)ին էլեկտրոնային փոստով:
5. Խորհրդի կողմից հոդվածի ընդունումը չի ենթադրում դրա անվերապահ հրատարակում:
6. Խորհրդի անդամները պարտավոր են պահպանել հոդվածի վերաբերյալ գաղտնիությունը, չհրապարակել հեղինակ(ներ)ի և գրախոս(ներ)ի անձնական տվյալները, գրախոսության արդյունքները, չօգտագործել դրանցում տեղ գտած տվյալները:
7. Հոդվածի գրախոսությունը ստանալուց հետո Խորհուրդը հեղինակին իրազեկում է հոդվածի ընդունման կամ մերժման, ինչպես նաև հրատարակության մոտավոր ժամկետների վերաբերյալ:
8. Գրախոսված հոդվածում բովանդակային ճշգրտումներ և լրացումներ կատարելու անհրաժեշտության դեպքում Խորհուրդն այն վերադարձնում է հեղինակին՝ լրամշակման: Սահմանված ժամկետում հեղինակը պարտավոր է կատարել փոփոխություններն ու լրացումները և/կամ գրավոր պատասխանել դիտողություններին:

#### IV. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԳՐԱԽՈՍԻ ՀԱՄԱՐ

9. Գրախոսը պետք է ունենա գիտական աստիճան համապատասխան մասնագիտությունից:
10. Գրախոս չեն կարող լինել Հեղինակի գիտական ղեկավարը, տվյալ աշխատանքի համահեղինակը և նրա հետ փոխկապակցված անձինք:
11. Գրախոսությունը պետք է ներկայացվի Խորհրդի սահմանած ձևանմուշի պահանջներին համապատասխան:
12. Գրախոսի կարծիքը պետք է լինի գիտականորեն փաստարկված և անկողմնակալ, ներկայացնի փորձագիտական գնահատական հոդվածի գիտական նորույթի, թեմայի արդիականության, հետազոտական մեթոդ(ներ)ի, ստացված արդյունքների մասին, ինչպես նաև հաստատի օգտագործված աղբյուրների և գրականության համապատասխանությունը հոդվածի բովանդակությանն ու ուսումնասիրության առարկային:
13. Գրախոսի և հեղինակի անունները կողմերի համար մնում են գաղտնի:
14. Գրախոսությունը գաղտնի փաստաթուղթ է և խստիվ արգելվում է դրա հանրայնացումը: